

Թիւ 26474
Օգոստոս 14, 1979

Հոգեշնորհ
Տ. Վազգէն ծ. Վրդ. Էէշիշեան
Սուաջնորդի Փոխանորդ Գանատայի
Թորոնթօ.

Սիրելի Հայր Վազգէն,

Թեմական Խորհուրդի Օգոստոս 10, 1979 նիստին մէջ անդրադարձանք մեր եւ Թեմական Խորհուրդի ամբողջ կազմին ունեցած առաջին պաշտօնական հանդիպումին՝ ծեր եւ Թորոնթօ ընակող մեր զաւակներէն տասնընթերեք ազգայիններու հետ, 1979 Յուլիս 14, Շաբաթ օր, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ մէջ:

Այս հանդիպումին գլխաւոր նպատակն էր օրինաւոր միջոցներով հաստատել երկրորդ համայնք մը Թորոնթոյի մէջ:

Մեր եւ Թեմական Խորհուրդի գոհունակութիւնը կը յայտնենք որ հրաւիրուած տասնընթերեք ազգայինները պաշտօնապէս յայտարարեցին որ իրենք որոշած են հնազանդիլ Առաջնորդին եւ Թեմական Խշխանութեան եւ պարագաստակամ են իրենց տրուելիք հրահանգներուն համաձայն կազմակերպել Թորոնթոյի մէջ մեր երկրորդ համայնքը Ս. Խաչ Հայց. Եկեղեցի անունով:

Վստահ ենք թէ ուղիղ եւ քարի մտադրութեամբ առաջադրուած այս նպատակը պիտի իրազործուի հարթելով անցեալի տարակարծութիւնները, եւ գործածելով մեր զաւակներուն հոգեւոր եւ իմացական տաղանդը եւ կարողութիւնները՝ մեր հոգեւոր մօր՝ Հայց. Սուրբ Եկեղեցիի հովանիին ներքեւ իմթելով զանոնք եւ քարզաւաճեցնելով անոնց կրօնական, մշակութային, ազգային, կրթական եւ ընկերային կեանքը:

Յուլիս 14ին տեղի ունեցած խորհրդակցութեանց հիման վրայ եւ յստակ ընելու համար կատարուելիք աշխատանքներու ուղեգիծը եւ պատասխանատուութիւնները, ծեզի կը հրահանգենք պատշաճը տնօրինել հետեւելով ծեզի տրուած ցուցմունքներուն:

- Թեմական Խորհուրդը Նկատի ունեցաւ Թորոնթոյի մէջ կազմուելիք երկրորդ ծուխի մը կազմակերպման համար իր նշանակած յանձնախումբը եւ նաև Նկատի առաւ սացուած տեղեկութիւնը թէ երկրորդ ծուխն հաւանական ծխականներ ժողով գումարելով որոշ անձեր ընտրած են իրեւ ծխական Խորհուրդ: Վերոյիշեալ տուեալները Նկատի ունենալով, ներկայ գիրով կը լուծենք որեւէ եւ բոլոր մարմինները եւ յանձնախումբները՝ որոնք նախապէս նշանակուած կամ ընտրուած են գործելու երկրորդ ծուխի անունով, եւ հետեւեալ անձերը կը նշանակենք Առժամեայ ծխական Խորհուրդ Թորոնթոյի մէջ կազմուելիք երկրորդ ծուխին Սուրբ Խաչ Հայց. Նկեղեցի անունով.

Տոքթ. Վարդան Այնանեան
Տիար Անդրանիկ Զաքարեան
Տիար Սուրբէն Էվլան
Տիար Եղիա Թորոսեան
Տիար Մարտիկ Հէքիմեան
Տիար Թակոր Նար
Տիար Ղեւոնդ Շահմելիքեան
Տիար Լեւոն Զէօմլէքեան
Տոքթ. Վահէ Սվաճեան
Տոքթ. Վաշէ Քերամեթլեան
Տիար Թակոր Քէլէշեան
Տիար Աքմէն Քիւրքնեան
Տիար Ժան Ֆէնէրծեան

- Կը հրահանգենք ձեզի որ վերոյիշեալ անձերը հրաւիրէք ժողովի՝ ուր զաղանի քուէարկութեամբ եւ ներկաներու մեծամասնութեան քուէով պէտք է ընտրեն Առենապետ եւ Գոխ Առենապետ, Առենաղպիր եւ Գոխ Առենաղպիր, Գանձապահ եփ Գոխ Գանձապահ, եւ եթէ անհրաժեշտ է այլ պաշտօններու համար պատամխանառուներ՝ եւ անոնց անունները մեզի ներկայացնէք վաւերացման համար: Հանձեցէք նաև դրկել իւրաքանչիւրին հասցէն եւ հեռածայնի թիւը:

- Նշանակուած վերոյիշեալ անձերը պիտի ծառայեն հրահանգներուն համաձայն Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին: Եւ Առժամեայ ծխական Խորհուրդի ոեւէ մէկ անդամ որ կ'անսաստէ կամ հակառակ կը գործէ արուած հրահանգներուն՝ ենթակայ կ'ըլլայ պաշտօնէ հեռացուելու Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի պաշտօնազրով եւ կ'արգիլուի որեւէ հանգամանքով Սուրբ Խաչ Նկեղեցիի անունով գործելու:

- Առժամեայ ծխական Խորհուրդը պարտի հետապնդել եւ կատարել հետեւեալը.

ա. Նկատի ունենալով Թորոնթոյի մէջ Ս. Երրորդութիւն Հայց. Նկեղեցւոյ ծուխին ներկայաւթիւնը եւ անդամութիւնը, Ս. Խաչ Նկեղեցւոյ անդամ ախճանազրուող ամէն անհատ պարտի ստորագրել տրասու անդամութեան համար պատրաստուած հաստատագիրը: --Տես օրինակը--

բ. Իւրաքանչիւր տրատու անդամ պարտի վճարել իր տարետուրը, որ նուազագոյն 15 տոլար է:

գ. Կարգադրութիւններ ընել առաջին Տարեկան Անդամական ժողովը գումարելու 1980 Փետրուար ամսու մէջ՝ նախազահութեամբ Գանատայի մէջ Առաջնորդի Ծոխանորդին:

դ. 1980 Փետրուարին գումարուելիք առաջին Տարեկան Անդամական ժողովին մասնակցելու եւ քուէարկելու, եւ ծուփին մէջ որեւէ պաշտօնի ընարուելու համար, իւրաքանչիւր անհատ պարտի իրաւասու անդամ դառնալ 1979 նոյեմբեր 15էն առաջ՝ ամբողջացնելով ա. եւ բ. հատւածներուն մէջ յիշուած պայմանները:

--Հաճեցէք Նկատի ունենալ որ միայն այս առաջին անգամուած համար եւ այս նպատակով զանց կ'առնենք մեր Թեմական նանոնադրութեան յօդուած 7ի մէջ յիշուած պայմանները: Առաջին Անդամական ժողովէն յետոյ, նանոնադրութեան ցուցմունքներուն կը հետեւիք:--

ե. Ոչ մէկ պարագայի Առժամեայ ծխական Խորհուրդը կրնայ որեւէ պարտաւորութեան տակ դնել ծուփը կամ Առաջնորդարանը որեւէ նպատակով կամ պատճառով կալուածական գնում կատարելով կամ շէնքի գործածութեան անունով վարձիք եւ կամ այլ ծախքի ենթարկելով, առանց կանխաւ արտօնութիւնը ստանալու Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին:

զ. Ցնոր տնօրինութիւն, Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդի Ծոխանորդը Գանատայի մէջ այս համայնքին կրօնական եւ Եկեղեցական գործերուն անմիջական պատասխանատուն պիտի ըլլայ:

է. Սուրբ Խաչ համայնքի տնտեսական եւ վարչական գործառնութիւնները պիտի կատարուին նախազահութեամբ Առաջնորդի Ծոխանորդին եւ ծուփին բոլոր ծեռնարկները պէտք է ծրագրուին համաձայն Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Թեմական Կանոնադրութեան:

5. Գլուխակ ըլլալով որ Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Թեմը իբրեւ իրաւական անձնաւորեալ կազմակերպութիւն արձանագրուած է Միացեալ Նահանգաց նիւ Եորբ Նահանգի մէջ՝ որեւէ օրինական վաւերագիր ստորագրելու կամ կանոնական քարեփոխումներ կատարելու համար Սուրբ Խաչ համայնքի ոեւէ եւ բոլոր ներկայացուցիչները ենթակայ են Սուրբ Խաչ համայնքի ու Թեմական Խորհուրդի հրահանգներուն; յարգելով Գանատական օրէնքներու տրամադրութիւնը:
6. Առժամեայ ծխական Խորհուրդի մէջ ծառայելու համար նշանակուած ոեւէ մէկ անդամի տեղ, որ անկարող է իր պարտականութիւնները կատարել մահուան, հրաժարման կամ առանց պատճառի շորս յաջորդական ժողովներէն քացակայելու կամ այլ պատճառու, Առաջնորդը եւ Թեմական Խորհուրդը նոր անդամ մը կը նշքնակեն:
7. Բոլոր թղթակցութեանց եւ արժանագրութեանց օրինակներէն պէտք է պահուին նաեւ Առաջնորդի Ծոխանորդին մօտ:

8. Ա. Խաչ Հայց. Եկեղեցւոյ անունով պետութեան մօտ արձանագրուած կանոններու մէջ կատարուելիք անհամեշտ փոփոխութիւնները յառաջիկային պիտի ներկայացնենք, համաձայնեցնելու համար զանոնք Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Թևմի Կանոնադրութեան տրամադրութեանց հետ:
9. Թեմական Խորհուրդի Օգոստոս 10 նիստին մէջ ակնարկութիւն եղաւ Յունիս 27, 1979 թուակիր զրութեան մը որ Յուլիս 14ին մեր հանդիպումէն յետոյ դրկուած է զանազան անձերու եւ որուն ներքեւ դրուած տասնըբերեր անուններէն վեցը ներկայիւս մեր հաստատելիք Առժամեայ ծխական Խորհուրդի անդամներու ստորագրութիւնն են: Թեմական Խորհուրդի նիստին մէջ որոշեցինք աննկատ Յողուլ այս անխորհուրդ արարքը, վստահելով Յուլիս 14ի ժողովին մէջ նոյն անձերու ցուցաբերած ուղղամիտ կեցուածքին եւ յայտարարութեան:

Մեր թելադրութիւնն է որ զիրար քաջալերէք ``ի գործս բարիս'', որպէս զի սատանան որ ակնդէտ պատրաստ է իրենց հաւատքին մէջ հաստատ մնացողները խարբալելու՝ ամօթալից հեռանայ մեր մէջէն: Կը մաղթենք որ Աստուծոյ օրհնութիւնը անպակաս մնայ մեր եւ Ս. Խաչ Հայց. Եկեղեցւոյ Առժամեայ ծխական Խորհուրդի եւ մեր Եկեղեցւոյ քոլոր զաւակներուն վբայէն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

ԱՐԵՐԻ ԽԵՆՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅՈՒՆԻՑԵԿ
ԵԿԵՂԵՑԻ

Etch Gross
Armenian Church

10 Յուլիս 1979

Հոգեշնորհ

Տէր Կազմէն ծ. Կրդ. Պէտքանակ
Առաջնորդական Փոխանորդ
Յանաւոյի Հայոց
Թորոսնթօ.

Յարգելի Հայր Սուրբ,

Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ պոաջին անդամական ժողովը տեղի ունեցաւ 7 Յուլիս 1979 Շաբաթ նրեկոյ, ի ներկայութեան՝ 136 բնակչութեան անդամներու։

Տեղեկատուութիւններէ եւ հաշուետուութիւններէ Վերջ, ծխական Խոր-
նուրդի, Ըստրողական եւ հաշուեքնիչ Յանձնախումբերու ընտրութիւնները
եղան։

Հիմեւեալ որոշումները առնուեցան։

ա- Ըստրողական Յանձնախումբը յաջորդ տարեկան անդամական ժողովին
ներկայացնելու համար, ծխական Խորնուրդի, Պատգամաւորներու,
Ըստրողական եւ Հաշուեքնիչ Յանձնախումբերու թեկնածուներու
ներկայական ցանկը մինչեւ 15 Դեկտեմբեր կը պատրաստէ։ Այդ թուա-
կանէն սկսեալ, ներառեալ ընտրութեան օրը, ոչ ոքի թեկնածու-
թիւնը կը բնույնուի։

բ- Անդամ մը, նուազագոյն 15 տօլար նուիրատուութեամբ օրուեար-
կութեան իրաւունքնը կը ստանայ։

գ- Ծուխիս հիմնադիր անդամներէն Տիար Գ. Մազմանեան, տարիքի
թերմամբ, հրաժարականը ներկայացնեցած ըլլալով, ծխական Խոր-
նուրդի թիւը 13 ըլլալով կը սահմանաբակուի։

Ծխական Խորնուրդս 9 Յուլիսի ներթական սիստին կազմեց իր դիւնքը։
Ստորեւ կը ներկայացնենք Ըստրողական եւ Հաշուեքնիչ Յանձնախում-
բերու անուանացանկը եւ ծխական Խորնուրդի վերջին կազմը։

Հաշուեքնիչ Յանձնախումբ։

Տիկին Շաբէ Շահնազարեան, Տիար Յարութիւն Մահակեան եւ Տիար
Ժիրայր Մկանեան

Հնարողական Յանձնախումբ ։

Տօքթ. Նորայր Ծէյլանլը, Տօքթ. Մանուէլ Սաքարիա, Տիառք Վահէ Պետրոս-
նան, Յովակիմ Օլթանեան եւ Վահէ Զերամեթլեան
ծխական Խորհուրդ ։

Տօքթ.	Վարդան	1) Այնանեան	Ատենապետ
Տիառք	Արմէն	2) Քիւրքնեան	Փոխ Ատենապետ
Տիառք	Յակոբ	3) Նար	Ատենաղպիր
Տօքթ.	Վահէ	4) Սվաճեան	Փոխ Ատենաղպիր
Տիառք	Ղեւոնդ	5) Եհամելիքնեան	Գանձապահ
Տիառք	Անդրանիկ	6) Զագարեան	Փոխ Գանձապահ
Տիառք	Մուրէն	7) Էվրան	Խորհղական
Տիառք	Եղիա	8) Թորոսնեան	"
Տիառք	Մարտիկ	9) Հէքիմեան	"
Տիառք	Լեւոն	10) Զէօմլէքնեան	"
Տօքթ.	Վաշէ	11) Զերամեթլեան	"
Տիառք	Յակոբ	12) Քէլէշեան	"
Տիառք	Ժան	13) Ֆէնէրնեան	"

Ի Դիմաց

Ա. Խաչ Հայր. Եկեղեցւոյ
ծխական Խորհուրդի

Ա. Խաչ Հայր. Եկեղեցւոյ

Տօքթ. Ա. Վ. Այնանեան
Ատենապետ

ՍՈՒՐԲ ԽԱՉ ՀԱՅՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ԹՈՐՈՒԹՅՈ, ԳԱՆԱՏԱ

ԱՆԴԱՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐ

Կը փափաքիմ արծանագրուիլ որպէս տրատու եւ քուէարկող անդամ Թորոնթոյի Ս. Խաչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ համայնքին, որ կը գտնուի Հիւսիսային Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի հոգեւոր իշխանութեան ներքեւ:

- Տրատու եւ քուէարկող անդամ չեմ ուրիշ որեւէ Եկեղեցւոյ:
- Մկրտուած եմ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, հաղորդակից անդամ եմ անոր:
- Կը խոստանամ յարգել Թեմին Կանոնադրութիւնը:
- Տասնըութը տարեկանէն վեր եմ:

ԱՆՈՒՆ - ԽԱԿԱՆՈՒՆ

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ. ա. ԵԿԵՂԵՑՎՈՅ ԱՆՈՒՆ

բ. Քաղաքի անուն

գ. Մկրտող Քահանայի անուն

ՀԱՍՑԵ

ՀԵՇԽԱՅԱՅՆ ՓՈՍՏԸՆ ԳՕՏ

ԹՈՒԱԿԱՆ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

- Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի մէջ համայնքի մը քուէարկող անդամ ըլլալու համար՝ ոեւէ մէկը պէտք է մկրտուած ըլլայ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, կամ հաղորդակից անդամ անոր, նուազագոյն 18 տարեկան, վճարած՝ տարեկան անդամատուրքը եւ անդամ՝ ոչ աւելի քան մէկ համայնքի:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՀԹՎԻԻ. -

.....

.....

ՀՆԴՈՒԽՍԱՆ ԹՈՒԱԿԱՆ

ԱՆԴԱՄԱՏՈՒՐՔ

“Հաղորդակից անդամ”.- Հայց. Եկեղեցւոյ իւրաքանչիւր անդամ պէտք է մկրտուած ըլլայ: Ոչ-հայ քրիստոնեայ Եկեղեցիներու մէջ կելքարտաձ մկրտութիւնը ընդունելի է. այս պարագային Հայ Եկեղեցականըմք կրնայ Դրոշմի Խորհուրդը կատարել եւ ընդունիլ գինք որպէս Հայց. Եկեղեցւոյ Հաղորդակից Անդամ: Ուրեմն հաղորդակից, այս պարագայի, կը նշանակէ մկրտութիւն այս Եկեղեցւոյ մէջ՝ որ օրինաւոր կը դառնայ Դրոշմի Խորհուրդով եւ ընդունմամբ Հայց. Եկեղեցւոյ կողմէ: